ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Գյուտեր և օգտակար մոդելներ 4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ 6

Ֆիրմային անվանումներ.....10

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 10

Գրանցված օբյեկտների նկատմամբ
իրավունքների փոխանցումը, լիցենզիաների
տրամադրումը եվ իրավունքների պահպանության
ժամկետների երկարաձգումը.....13

Իրավական դաշտ 14

Միջազգային համագործակցություն 14

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Արմինե ՓԵԹԱԿՉՅԱՆ
Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Դիզայնը և էջադրումը՝ Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© << մտավոր սեփականության գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2010թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: 2010թ. հուլիսի 1–ից ուժի մեջ են մտել «Ապրանքային նշանների մասին» և «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքները, որոնք համապատասխանեցված են TRIP՝s համաձայնագրի և Եվրամիության մի շարք դիրեկտիվների դրույթներին:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2010թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 142 գյուտի և 45 օգտակար մոդելի հայտ, որոնցից 177-ը՝ ազգային հայտատուներից, 10-ը՝ օտարերկրյա հայտատուներից (աղյուսակ 1):

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 3309:

Աղյուսակ 1

Երկիրը	2009	2010
Հայաստան	157	177
Այլ երկրներ	11	10
Ընդամենը	**168**	**187**

2009թ. համեմատությամբ 2010թ. ստացված հայտերի ընդհանուր քանակն ավելացել է 19-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 20-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 1-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆԿ) ներկայացվող միջազգային և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2010թ. գործակալությունը ստացել է 4 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2010թ.թ. ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 62 միջազգային հայտ:

2010թ. գործակալությունը ստացել է 5 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման

թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2010թթ. ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 23 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 181 հայտով, ընդ որում՝

- 106 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,
- 45 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,
- 27 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին,
- 2 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին,
- 1 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:

2010թ. ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ.2-ում՝ գրաֆիկի տեսքով:

2010թ. տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 2468 գյուտի արտոնագրերից ՀՀ տարածքում գործում են 281–ը, օգտակար մոդելի 220 արտոնագրերից գործում են 74-ը:

2010 թվականի տվյալներով Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 4115 Եվրասիական արտոնագրեր:

Նկ. 1



Նկ. 2



A. Մարդու կենսական պահանջների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, զենք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2010թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1959 հայտ (որոնցից 1266-ը՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտ:

Ապրանքային նշանների 1850 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ է կանչվել 45 հայտ, 120 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:

Գրանցվել են 1499 ապրանքային և սպասարկման նշաններ (որոնցից 926-ը՝ ազգային հայտատուների անունով), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքի ծագման տեղանվան 2 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, և կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 2 որոշում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3270 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել է

2373 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ: Նախնական մերժման մասին կայացվել է 299 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 428:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 23 հայտ:

2009թ. համեմատությամբ 2010թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակն աճել է՝ 1115-ի դիմաց (2009թ.) 1266 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն աճել է ազգային ընթացակարգով (592- ի (2009թ.) դիմաց 693 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 23 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 17-ը՝ ազգային հայտատուներից, 1-ը՝ Ամերիկայի Միացյալ նահանգներից, 2-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Բելառուսից, 1-ը՝ Շվեյցարիայից, 1-ը՝ Վիրջինյան կղզիներից): Դրանցից 14-ը ստացել են վկայագիր, 2-ի համար կայացվել է որոշում վկայագիր ստանալու մասին:

2009թ. համեմատությամբ ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ ազգայինը՝ 19-ի դիմաց (2009թ.) 17 հայտ և օտարերկրյա հայտատուներինը՝ հավասար:



Նկ. 3

Աղյուսակ 2

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	1266	-	1266
ԱՄՆ	185	238	423
Ավստրալիա	2	14	16
Ավստրիա	-	37	37
Արաբական Միացյալ Ամիրայություններ	38	-	38
Արգենտինա	10	-	10
Բելառուս	-	35	35
Բենիլյուքս	-	148	148
Բոսնյա և Հերցեգովինա	6	-	6
Բուլղարիա	1	47	48
Գերմանիա	15	178	193
Դանիա	-	21	21
Եգիպտոս	-	11	11
Եվրոպայի Միություն (OHIM)	-	105	105
Թուրքիա	6	79	85
Իռլանդիա	29	5	34
Իսպանիա	2	37	39
Իտալիա	11	138	149
Իրան	9	34	43
Լատվիա	-	35	35
Լեհաստան	2	63	65
Լիխտենշտայն	7	18	25
Լյուքսեմբուրգ	2	-	2
Կանադա	4	-	4
Կիպրոս	4	24	28
Կորեայի Հանրապետություն	10	48	58
Կուբա	-	2	2

Հնդկաստան	3	-	3
Հորվաթիա	-	5	5
Հունաստան	2	29	31
Հունգարիա	1	78	79
Ղազախստան	-	18	18
Ճապոնիա	36	58	94
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն	57	124	181
Մոլդովայի Հանրապետություն	8	34	42
Նիդեռլանդներ	8	-	8
Նորվեգիա	-	17	17
Շվեդիա	2	28	30
Շվեյցարիա	57	258	315
Չեխիա	-	33	33
Չինաստան	4	234	238
Պանամա	34	-	34
Պորտուգալիա	-	12	12
Ռումինիա	-	22	22
Ռուսաստանի Դաշնություն	28	308	336
Սերբիայի Հանրապետություն	-	10	10
Սիրիայի Արաբական Հանրապետություն	3	24	27
Սլովակիա	1	9	10
Սլովենիա	-	65	65
Վիրջինյան կղզիներ	12	-	12
Վրաստան	8	11	19
Ուկրաինա	33	131	164
Ֆինլանդիա	7	17	24
Ֆրանսիա	22	148	170
Այլ երկրներ	22	280	302
Ընդամենը	**1959**	**3270**	**5229**

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2010թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3882 հայտ:

Գրանցվել է 3036 անվանում, մերժվել է 846-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի հ. 872 որոշման, ֆիրմային անվանման մեջ "հայ", "Հայաստան", "հայկական" բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 14 թույլտվություն, որը 2009թ. համեմատությամբ 1-ով պակաս է :

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2010թ. լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 12 համար՝ № 1 - № 12: Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն: Ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 124 գյուտի, 41 օգտակար մոդելի, 22 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1565 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին, նաև տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների մասին, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

«Ապրանքային նշանների մասին" նոր օրենքի հետ կապված հրապարակվել է «Ապրանքային և սպասարկման նշանների հայտեր» տեղեկագիրը: 2010 թվականին հրապարակվել է տեղեկագրի 10 համար՝ № (8/1) - № (12/2) :

Իրականացվել է 124 գյուտի և 41 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև 22 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաև «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2009թ. «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար: Տարեկան հաշվետվությունները ուղարկվել են 26 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2009 թ. տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների վերաբերյալ:

«Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրերը և գործակալության 2009թ. տարեկան հաշվետվությունը տեղադրվել են ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման նպատակով:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ և Հայաստանի ազգային գրադարանին ինչպես նաև ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաև ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 18 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաև՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) և Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնցից 4 համարներում զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 124 գյուտի և 41 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքներն ընթացքում են: «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի և Կանադայի արտոնագրային գերատեսչություններից կոմպակտ սկավառակներով:

2010թ. շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրման նպատակով:

Թարմացվել են գործակալության ինտերնետային կայքի «Վիճակագրական տվյալներ», «Օրենքներ», «Միջազգային պայմանագրեր», «Ենթաօրենսդրական ակտեր», «Ձևաթղթեր», «Պաշտոնական հրապարակումներ» ենթաէջերը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ մտավոր սեփականության գործակալության ինտերնետային կայքում ստեղծվել է ապրանքային և սպասարկման նշանների և արդյունաբերական նմուշների հայտերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգ:

Եվրոպական արտոնագրային գերատեսչության և այլ արտոնագրային գերա-

տեսչությունների հետ տեղեկատվության փոխանակման նպատակով ՀՀ մտավոր սեփականության գործակալության գյուտերի և օգտակար մոդելների հիմնապաշարից գյուտերի առաջին էջի XML ֆորմատով դուրս բերման հնարավորություն է ստեղծվել:

Փոփոխություններ են տեղի ունեցել արտոնագրային հավատարմատարների տվյալների բազայում: Արտոնագրային հավատարմատարների տվյալների բազայում ցանկացած փոփոխություն կատարելուց հետո այն ավտոմատ համալրվում և տեսանելի է դառնում գործակալության ինտերնետային կայքում:

«Ապրանքային նշանների մասին" նոր օրենքի ընդունման հետ կապված փոփոխություններ են կատարվել ապրանքային և սպասարկման նշանների ենթահամակարգում: Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև գործակալության ինտերնետային կայքում:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման և տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը վերազինվել է տասնմեկ Intel(R) Core(TM)2 DUO տեսակի համակարգիչներով, սերվերով, համակարգչային օժանդակ սարքերով և սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով կատարվել են փոփոխություններ և լրացումներ Մտավոր սեփականության տեղեկատվական համակարգում:

Իրականացվել է Windows XP, Windows Vista համակարգերի և Microsoft office-ի տեղադրում և կարգաբերում, օպերացիոն համակարգի սպասարկում, համակարգչային ծրագրերի տեղադրում և կարգաբերում, վնասված համակարգիչների և ծրագրերի ախտորոշում և անսարքության վերացում:

ԳՐԱՆՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում «Ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի և «Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման» կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի և գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման դիմումների քննարկումը և պայմանագրերի գրանցումը:

2010թ. ընթացքում քննարկվել և գրանցվել են 91 դիմում, որոնցից 69-ը՝ ապ¬րանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման մասին, 15-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիայի տրամադրման մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 2–ը՝ արդյունաբերական նմուշի զիջման մասին, 2-ը՝ գյուտի արտոնագրային հասարակ լիցենզիա տալու մասին, 2-ը՝գյուտի արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին:

Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67–րդ հոդվածի և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման» կարգի համաձայն գործակալությունը իրականացրել է 260 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, ինչպես նաև 241 գյուտի և օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և 10 արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքները, ուշադրություն է դարձվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացմանը և բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, գլխավորապես իրավական դաշտի կատարելագործմանը, ինչն իրականացվել է ՀՀ կառավարության 2010թ. գործունեության կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում: Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և 2010թ. հուլիսի 1–ից ուժի մեջ մտած «Ապրանքային նշանների մասին» և «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ նոր օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերը: Ապրանքային նշանների մասով 2010թ. նոյեմբերի 18–ին ՀՀ կառավարության թիվ 1538–Ն որոշմամբ հաստատվել են «Ապրանքային նշանների պետական գրանցամատյանի վարման և քաղվածքների տրամադրման կարգը», «Կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային նշանի հայտի և հակառակը փոխակերպելու կարգը», «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգը», «Ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգը» և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման կարգը»:

Քննարկվել են ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ոլորտում Մտավոր սեփականության գործակալությունը հիմնականում համագործակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ), ինչպես նաև ԱՊՀ և այլ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԳ և ԵԱԱԳ, ինչպես նաև ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:

Գործակալության ինը մասնագետ մասնակցել է Ժնևում, Մոսկվայում, Պրահայում, Բուդապեշտում, Բրյուսելում կազմակերպված ուսուցողական ծրագրերին, սեմինարներին և այլ պաշտոնական հանդիպումների: Վերոնշյալ միջոցառումները

կազմակերպվել և ֆինանսավորվել են ՄՍՀԿ-ի, ՄՍՀԿ միջազգային ակադեմիայի և ԵՄ-ի կողմից: Գործակալության մեկ մասնագետ փորձի փոխանակման նպատակով այցելել է ԱՄՆ արտոնագրային գերատեսչություն:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության չորս մասնագետ երեք շաբաթով մասնակցել են Ռուսաստանի Դաշնության մտավոր սեփականության պետական ինստիտուտի կազմակերպած ուսուցողական ծրագրերին:

2010թ. դեկտեմբերին Մտավոր սեփականության գործակալությունը հյուրընկալեց Դանիայի արտոնագրային գերատեսչության գլխավոր տնօրենի տեղակալ Ք. Յենսենին և միջազգային համագործակցության գլխավոր խորհրդական Մ. Փոուլսենին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության շրջանակների ընդլայնմանը, մտավոր սեփականության ոլորտում առկա խնդիրների ու բնագավառի կատարելագործմանը նպաստող հնարավոր աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցեր:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Թվինինգ ծրագրի շրջանակներում 2010թ. Մտավոր սեփականության գործակալությունը նախագիծ (fiche) ներկայացրեց, որն էլ հավանության արժանացավ:

ՄՍՀԿ-ի շրջանակներում 2010թ. մտավոր սեփականության ոլորտում խորհրդատվական առաքելությամբ Մտավոր սեփականության գործակալություն ժամանեցին ՄՍՀԿ Եվրոպայի և Ասիական որոշ երկրների բաժնի իրավախորհրդատու Ս.Զոտինը և ՄՍՀԿ փորձագետ Ռոն Մարշանը: